ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 02

2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-ԻՆ № ՍՊԲ 20-2023 ՊԱՅՄԱՆԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «27» 12 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ֆեդերացիա) ի դեմս նախագահի, որի անունից, համաձայն լիազորագրի հանդես է գալիս գործադիր տնօրեն Արմեն Գևորգյանը, որը գործում է «Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 27-ի Ն/Ֆ1.2/29889-2023և Ն/17.3/29918-2023 զեկուցագրերը և 2023 թվականի մայիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» № ՍՊԲ 20-2023 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1-ին կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի 1.1-ին կետի «99240,0 (իննսունինը միլիոն երկու հարյուր քառասուն հազար) դրամ» թվերը և բառերը փոխարինել «96600,0 (իննսունվեց միլիոն վեց հարյուր) դրամ» թվերով և բառերով:

2) Պայմանագրի Հավելված N1-ում և Հավելված N2-ում «99240,0 (իննսունինը միլիոն երկու հարյուր քառասուն հազար) դրամ» թիվը փոխարինել «96600,0 (իննսունվեց միլիոն վեց հարյուր) դրամ» թվով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

2. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով երկու օրինակից, կնքված է, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032027 ՀՎՀՀ՝ 02698732 Գլխավոր քարտուղար՝ _____ Հ. Հակոբյան Կ.Տ	«Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն ք. Երևան, Խանջյան 50, Բանկ՝ «Արարատ բանկ» ԲԲԸ Հ/Հ՝ 1510002020290100 ՀՎՀՀ՝ 01515033 Էլ. փոստ՝ info@chessfed.am Գործադիր տնօրեն՝ _____ Ա. Գևորգյան Կ.Տ